

նութեանց: Սլաւ հոգին մօտ է հայու հոգիին, հողային մօտիկուլթեամբ մը, զոր նոր բառ մը (tellurique) թերեւս կը բացատրէ: Ատ էր պատճառը, որ Նալպանդեանցը ռուս գաղափարագրուլթեան զինակիր մը ըլլալը զոհողուլթիւն մը չնկատեց, իր ժողովուրդէն խլուած իր ուժերուն գործածման մէջ իր վատնած եռանդը վերածելով ժողովրդդային հանգանակի մը: 1850էն ասդին, արեւելահայ երիտասարդուլթիւնը- մտաւորականներու փաղանգը - իր սնունդը, ոսկորները ճարեց այդ հոգեբանուլթեան մէջ: Բայց մեր յեղափոխականները ռուսերէն չսորվեցան անշուշտ իրենց ազգը սիրել եւ անոր համար զոհուելու յօժարիլ, բայց սորվեցան անոնցմէ -մեղքերէն դուրս- գործելու, գործողութեան կիրքը, որ առանձին իրականուլթիւն է: Կը բաւէ բաղդատել 19րդ դարու երկրորդ կէսը արեւելահայ ու արեւմտահայ կեանքին, համոզուելու համար, թէ որքան հզօր միջամտած է սլաւ հոգիին<sup>(\*)</sup> մեր ամէն արտայայտուլթեանց մէջ:

«Կովկասից», ուր միայն նոր քաղաքներ չէր, որ կը բուսնէին քանի մը տարուան մէջ, ինչպէս սովորուլթիւն է դատել ռուսական շինարարուլթիւնը, Ասիան շէնցնելու յաւակնող ոգիին ծնունդ: Այլեւ մա՛նաւանդ կը ծնին մեր լեռներուն մէջ չերքէզ գիւղակներու նախատիպ գեղեցկուլթիւնները, այն աղջիկները, որոնք կը կենան խրճիթի մը դրան, ձեռքերնին իրենց փորին ու կը նային հիւրին, ճամբորդ արիւնի մը նման տաք-տաք իջնելով երակներդ ի վար. գաղթական (թուրքիոյ մէջ) այս ցեղին համար,

---

(\*) Կը գգուշանամ շատ յստակ վնիւններ, *աֆորիզմներ* առաջարկելէ ցեղերու հոգիին վրայ, ինչպէս կ'ախորժին ընելէ գերման մտածողները (Քէյգերլինկ, Շփենկլէր) փարատոքսը եբբ կը ջանան արժեւորել, խոր հմտութեան մը նպաստովը: Իրողութիւնը այն է, որ արեւելահայ երիտասարդութիւնը -կազմակերպիչը հայ հոգիի նոր յղացման- աշակերտ է ռուս աւանդութեան: Արեւմտահայերը անջատ հերոսներ եւ ողբալի կազմակերպութիւններ միայն կարողացան տալ ընդհ. սպասին: